

լական, ազատասպան կարգ ու սարքը իր բովանդակ ալլանդակութեամբ — ԳէՊէուներով ու Չեկաներով — այն աստիճան խորթ եւ ընդզեցուցիչ էրեւոյթ մըն է Անգլիոյ ընկերվարական բարքերուն համար, որ օր մը թուուցիկի մէջ Աշխատաւորականներու կենդրոնը որակեց բոլշեւիզմը փոքր ինչ կոչաւ, բայց որքա՞ն տեղին՝ ածականով մը — աղտոտ հոսսնիք . . . :

Ահա թէ ինչու այդ հոսանքը — զոր թիւրիմացութեամբ կ'անուանեն կոմունիզմ — հող չի գտներ տարածուելու Մեծն Բրիտանիոյ մէջ եւ վերջին ընտրութիւններուն ոչ իսկ մէկ հատիկ կոմունիստ անցաւ, որպէս երեսփոխան: Կար Սորհրդարանի մէջ խեղճ ու կրակ հնդիկ մը — Սախլաթվալա — որ կը հռչակէր զինքը Լէնինի վարդապետութեան կուսակից. ան ալ չվերընտրուեցաւ:

Բրիտանական ազատասպառութեան ջինջ մթնոլորտը չի հանդուրժեր եւ սաղմին մէջ կը խեղդէ բռնապետական ժահրոտ հոսանքները — լինի բոլշեւիզմ, թէ Ֆաշիզմ . . . :

Հակառակ իր օրգանական ատելութեան զէպի բոլշեւիկեան գործելակերպը, ՄակԴոնալդի զահլիճը, այնուամենայնիւ, կ'ուզէ ճանչնալ Մոսկուայի կառավարութիւնը եւ ըստ կարելոյն կենդանի յարաբերութիւններ հաստատել Ռուսաստանի հետ:

Աշխատաւորական պարազլուիներու կարծիքով, Եւրոպայի եւ մասնաւորապէս Անգլիոյ տնտեսական ծանր ճգնաժամը խոշոր չափով մը հետեւանք է այն հանգամանքին՝ որ Ռուստոտանի պէս ահազնածաւալ երկիրը — երկրազնդի 1/6 մասը — այնքան հարուստ ամէն տեսակ բնական բերքերով — հաց, քարիւղ ու քարածուխ, պէս-պէս մետաղներ — դուրս կը մնայ համաեւրոպական տնտեսական շրջանառութենէն: Պէտք է հետեւարար ձգտիլ մտցընելու այդ մեծ երկիրը համաեւրոպական գերդատտանին մէջ, — բան մը, որ Աշխատաւորականներու կարծիքով, կրնայ փութացնել Ռուսիոյ մէջ ներքին ոյժերու, ընկերային հակամարտութիւններու զարգացումը, կրնայ ուրեմն եւ փութացնել նոյնիսկ սովետական «իրաւակարգի» փլուզումը:

Ահա այն ատեն է — այդ բաղձալի փլու-

զումէն վերջը — որ պիտի բացուի Ռուսաստանի ժողովուրդներուն, մասնաւորապէս կովկասեան աղգերու համար ճգնաժամային նոր շրջան մը, զոր անարկած անցնելու համար թերեւս անհրաժեշտ պիտի լինի Աղգերու Դաշնակցութեան միջամտութիւնը:

Այն ատեն է, որ Բրիտանիոյ Աշխատաւորական կուսակցութիւնն ու կառավարութիւնը պիտի կրնան մեծ դեր խաղալ այդ ժողովուրդներու ճակատագիրը դարբնելու ցաւոտ աշխատանքին մէջ:

Ինչ ալ որ ըսեն ՄակԴոնալդի ու իր ընկերներու մասին, որքան ալ անոնք պատեհապաշտ մնան իրենց ընթացքին մէջ եւ շարունակող — շարք մը հիմնական կէտերու մէջ — Մեծն Բրիտանիոյ աւանդական քաղաքականութեան դիժին, այնուամենայնիւ, չեն կարող դրժել իրենց զաղափարային էութիւնը, իրենց սոցիալական հաւատամքը, Ռամկավարութեան եւ Ազատութեան հաւատամքը: Անոնք արդէն իսկ ասպացուցին այդ՝ իրենց ընթացքով հանդէպ Եգիպտոսի, Իրաքի, շուտով դուրէ նաեւ հանդէպ Հնդկաստանի, որու ինքնավարութիւնն ալ թերեւս հեռու չէ: Ինքնավարութիւն մը, որ այնքան նման է անկախութեան՝ բրիտանական մեծ կայսրութեան Դոմինիոնի պայմաններուն մէջ . . . : Ո՛չ, անշուշտ. ՄակԴոնալդ եւ Հենտերսըն բրիտանական դարաւոր քաղաքականութեան լոկ մեքենական շարունակողներ չեն, անոնք նոյն ուղղութիւն մը (Օրիենթալիստ) կը մտցնեն այդ քաղաքականութեան մէջ, նոր դարազլուիս մը, դեմոկրատիզմի ու ընկերվարութեան նշանակին տակ . . . : Եւ եթէ առայժմ չեն ձեռնարկեր իրենց երկրի մէջ ընկերվարային խոր, արմատական բարենորոգումներու — համաձայն իրենց դաւանած վարդապետութեան ոգուն — պատճառն այն է, որ չեն ուղեր մէկէն ի մէկ խրտչեցնել իրենց հանրային կարծիքը, կ'ուզեն կամաց-կամաց վարժեցնել զայն, ընտելացնել աշխատաւորական ուժիւնին: Թերեւս նոյն այդ հիմնական նկատումով է, որ անոնք երբեմն — ինչպէս օրինակ, Լահէի վեհաժողովին մէջ հայրենասիրութեան, ազգային ջերմ նախանձախնդրութեան ցոյցեր կ'ընեն, հանդիսանալով նոյնիսկ աւելի մոլեռանդ անդլիացիներ,